ВААКН Н. ДАДРЯН. История армянского геноцида (этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа), *Ереванский университет “Гладзор”, 2007, 584 с.*



Շնորհակալ աշխատանք է կատարել Երևանի «Գլաձոր» համալսարանը՝ պրոֆեսոր Ժ. Ջհանգիրյանի հովանավորու- թյամբ և Ս. Հովհաննիսյանի թարգմանու- թյամբ ռուսերեն լույս ընծայելով աշխարհահռչակ ցեղասպանագետ Վահագն Դադրյանի մեծարժեք ու ստվարածավալ մենագրությունը՝ նվիրված Թուրքիայում Հայոց ցեղասպանության (1915-1923) 90-րդ տարելիցին:

Վ. Դադրյանի աշխատությունը բաղկացած է ինը բաժնից. յուրաքանչյու- րում քննարկվում են ցեղասպանությանն առնչվող որոշակի խումբ հիմնահարցեր:

Պատմական ընդարձակ հետազոտության շնորհիվ Վ. Դադրյանը եզրահանգում է, որ եվրոպական տերությունները ջանքեր էին ձեռնարկում՝ ինքնին նպաստելով հայերի վիճակի վատթարացմանը: Բարձրացնելով Օսմանյան կայսրության ենթակա ազգերի ինքնագիտակցությունը, ներշնչելով նրանց հույսեր և միաժամանակ չամրապնդելով դրանք ուժային լծակներով՝ միջազգային խաղընկերները դրանով իսկ Օսմանյան կայսրության կառավարողներին ինչպես ազդակ, այնպես էլ արդարացում էին տալիս այդ ազգերին մեծ վնաս հասցնելու համար՝ սաստկացնելով շահագործումը: Ըստ գիտնականի՝ XIX դարի վերջին տասնամյակներին հենց այդպես է ծագել ու բյուրեղացել Հայկական հարցը՝ «յուղ լցնելով» թուրք-հայկական կոնֆլիկտի վրա:

Հեղափոխական կազմակերպությունների հանդես գալը գիտնականը բացատրում է այն հուսահատությամբ, որ հայերին հասցրեց եվրոպական տերությունների անկարողությունը բարենորոգումների իրականացման հարցում: Դրա արտահայտություններից էր 1896 թ. օգոստոսի 13-ին Օտտոմանյան բանկի գրավումը դաշնակցականների կողմից:

Պատմաբանը փաստում է, որ Աբդուլ Համիդը դարաշրջանի զանգվածային սպանությունների շարքը սկսեց Սասունի 1894 թ. կոտորածով:

Վերլուծելով եվրոպական դիվանագետների զեկուցագրերը՝ հեղինակը հանգում է այն հետևության, որ կենտրոնական իշխանությունները, իսկ ավելի ճշգրիտ՝ պալատը և անձամբ սուլթան Համիդը, մասնակից էին կոտորածի իրականացմանը՝ առանց տարիքային և սեռային խտրության: Այդ զեկուցագրերը վկայում են, որ հարկերի հետ կապված հարցը իշխանություններն օգտագործում էին որպես հայերին կոտորելու առիթ:

Տարբեր հեղինակների հաղորդած տվյալների համադրման շնորհիվ Վ. Դադրյանը եզրակացնում է, որ կոտորածներին մասնակցել են հետևակի 12 գումարտակ, չորս հեծյալ համիդիե ստորաբաժանումներ և մի քանի հրետանային մարտկոց, չհաշված ոչ կանոնավոր զորքերի հազարավոր զինվորներին:

Հեղինակի կարծիքով՝ Սասունի կոտորածը ժամանակակից օսման- յան պատմության մեջ հայերի առաջին կազմակերպված զանգվածային սպանդն էր, որն իրականացվեց

խաղաղ ժամանակ և կապ չուներ որևէ արտաքին պատերազմի հետ: Կոտորածը տևեց 24 օր՝ 1894 թ. օգոստոսի 18-ից մինչև սեպտեմբերի 10-ը:

Վ. Դադրյանը համոզված է, որ մարդկային ահռելի կորուստներն ու նյութական ավերածությունները, լինելով զանգվածային կոտորածների անբաժան մասը, այնուամենայնիվ, չեն տալիս կատարվածի լիակատար պատկերը: Կան ևս երկու բաղկացուցիչներ, որոնք անհրաժեշտ է նկարագրել ու քննարկել: Դրանցից մեկը հանցագործության իրականացումից հետո հանցագործների գրաված դիրքն է, երկրորդը, որը սերտորեն կապված է առաջինի հետ, արտաքին աշխարհի հակազդեցության բացակայությունն է: Այն ժամանակների թուրքական պաշտոնական հաղորդագրությունները ոչ միայն ժխտում էին հայերի նկատմամբ կիրառված զազանությունները, այլև վերջիններիս մեղադրում էին տեղական մուսուլմանների դեմ հանցագործությունների մեջ: Առ այսօր գրեթե բոլոր թուրք պատմաբանները և նրանց համախոհները Սասունի ապստամբությունը նկարագրում են իբրև «մեծ հեղաշրջում», իբրև հայկական բռնության բռնկում՝ ընդդեմ թուրքական իշխանությունների ու անմեղ մուսուլմանական բնակչության, որի հետևանքով մուսուլմանական գյուղերի ողջ բնակչությունը ոչնչացվեց: Այն հարցին, թե որն էր տերությունների պատասխանը տեղի ունեցածին, Վ. Դադրյանը նշում է, որ վերջիններս այդպես էլ չդիմեցին որևէ քայլի՝ պաշտպանելու հայերին: Հերթական անգամ նրանք չկարողացան առաջարկել ավելի լավ լուծում, քան նոր բարենորոգումների ևս մեկ պլան, որն ստացել է «Մայիսյան բարենորոգումների նախագիծ» անունը: Այն մանրամասնորեն մշակվեց 1895-ի մայիսին: Իսկ հետագա ամիսներին սուլթանը դիմեց զանազան խարդախությունների ու խորամանկությունների՝ այդ բարենորոգումները ձգձգելու և վերջապես դրանցից հրաժարվելու համար:

Զարգացող իրադարձությունների խորապաստառի վրա Վ. Դադրյանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ 1895 թ. սեպտեմբերի 18-ին օսմանյան մայրաքաղաքում տեղի ունեցած ցույցին, որը կազմակերպել էր Հնչակյան կուսակցության ղեկավարությունը մեկ այլ քաղաքական կուսակցության՝ արմենականների աջակցությամբ: Ինչպես նկատում է Վ. Դադրյանը, դա օսմանյան պատմության մեջ առաջին դեպքն էր, երբ ոչ մուսուլմանական փոքրամասնությունը համարձակվում էր հենց կայսրության մայրաքաղաքում դուրս գալ կենտրոնական իշխանությունների դեմ. նման մասշտաբի բողոքը հավասարազոր էր մարտահրավերի: Հեղինակը եզրահանգում է, որ զանգվածային կոտորածի գործելակերպի ձևավորման գործում, որը հիմնական զենք դարձավ թուրք-հայկական հակամարտության լուծման համար, ամենակարևոր գործոնը անպատժելիությունն էր:

Վ. Դադրյանը անդրադառնում է նաև Զեյթունի ապստամբությանը, որն սկսվեց 1895 թ. հոկտեմբերի 24-ին և ավարտվեց 1896 թ. փետրվարի 2-ին: Ըստ նրա՝ այդ ապստամբությունը մի քանի առումներով արժանի է ուշադրության: Այստեղ ընթացան մի քանի համառ ճակատամարտեր, որոնց ընթացքում օսմանյան բանակին, ավելի ճիշտ՝ Հինգերորդ բանակային կորպուսին, որը տեղակայված էր Մարաշից ոչ հեռու, ոչ մի կերպ չհաջողվեց ճեղքել հայերի պաշտպանական գիծը. նա ծանր կորուստներ կրեց: Ի վերջո, Ռեմզի փաշայի փոխարեն գլխավոր հրամանատար նշանակվեց Էդհեմ փաշան: Ընդհանուր առմամբ, 24 գումարտակները, 12 հրանոթները, Զմյուռնիայից եկած 8000-անոց դիվիզիան և 30 000 քրդական, թուրքական և չերքեզական անկանոն զորքերը չկարողացան զենքի ուժով ընկճել 1500 ապստամբներին, որոնք զինված էին կայծքարի և 400 նոր տիպի հրացաններով: Հազարավոր թուրք զինվորներ ցրտահարվեցին, հազարավորներ էլ զոհվեցին:

Փաստագրական հետաքրքիր մանրամասներ է պարունակում Վանի հայ-թուրքական ընդհարումների վերլուծությունը (1895 թ. ամառ): Հեղինակը գրում է, որ, ի տարբերություն օսմանյան ռեժիմի դեմ նախորդ բոլոր հեղափոխական ակտիվության դեպքերի, Վանում իրադարձությունների ժամանակ հնչակյաններն ու դաշնակցականները ոչ միայն միավորվեցին, այլև, որը կարևոր է, նշանակալի օգնություն ստացան երրորդ կուսակցությունից՝ արմենականներից: Սուլթանի կողմից Վան ուղարկված բարենորոգումների տեսուչ, գեներալ Սաադէդդինը գործի դրեց քրդական հեծելազորը, որը, սակայն, մեծ կորուստներ տվեց ու հետ մղվեց: Ինչպես գրում է հեղինակը, բաժանվելով երեք խմբի, հայերն սկսեցին հեռանալ օսմանյան տարածքից: Արմենականների խումբը բաղկացած էր 200 զինված և մոտ 700 անզեն մարդկանցից: Հեռացողներին միացան 58 դաշնակցական և 25 հնչակյան:

Թեև թուրքերը հանդիսավորապես խոստացել էին ապահովել հայերի անվտանգությունը՝ ընդհուպ իրանական սահմանը, Կարահիսար լեռան վրա բոլոր երեք խմբերին շրջապատեցին թուրքական կանոնավոր զորամասերն ու քրդական անկանոն ստորաբաժանումները: Հայերը հուսահատ կռիվ մղեցին մինչև վերջին մարդը: Միայն 35 հոգու հաջողվեց փրկվել: Այդպիսով Վանի պաշտպանները՝ մոտ 1000 մարդ, զոհ գնացին կառավարության ուխտադրժությանը: Ընդհանուր առմամբ, Վանում և շրջակա գյուղերում հայերի կորուստների թիվը հասավ 20 000-ի:

Վ. Դադրյանը առանձնակի անդրադառնում է Բանկ Օտտոմանի գրավմանը: Այդ առթիվ նա գրում է, որ կարծես չցանկանալով հետ մնալ արմենականներից ու հնչակյաններից, որոնք կարևորագույն դեր խաղացին 1894-ի օգոստոսին Սասունի ինքնապաշտպանության և 1895 թ. սեպտեմբերին Բաբը Ալիի ցույցի կազմակերպման ժամանակ, դաշնակցականները ձեռնարկեցին ամենահանդուգն հարձակումը Օսմանյան կայսրության մայրաքաղաքում: Երկար շաբաթներ նախապատրաստվելուց հետո 1896 թ. օգոստոսի 14-ին նրանք գրավեցին Բանկ Օտտոմանը՝ եվրոպական ֆինանսների ամրոցը, որտեղ հիմնական բաժինը բրիտանական և հատկապես ֆրանսիական ավանդներն էին: Քաղաքում ահաբեկչության մթնոլորտը խորացնելու նպատակով հայ խռովարարները, թիրախ ընտրելով մի քանի մեծ ոստիկանական վարչություններ, ձեռնառումբերով և նռնակներով հարձակվեցին նրանց վրա՝ Սամաթիա և Կալաթասարայ թաղամասերում: Նախատեսված էր նաև Ղալաթիո կամրջի վրա հարձակվել իր պաշտոնավայրը գնացող մեծ վեզիրի վրա, որը, սակայն, ձախողվեց: Ամենաարյունահեղ ընդհարումները տեղի ունեցան Սամաթիայում: Ամրանալով մի քանի շենքերում՝ դաշնակ ապստամբների փոքր խումբը, որի մեջ էին նաև մի քանի երիտասարդ կանայք, տասնչորս ժամ անհավասար և հուսահատ կռիվ մղեց ոստիկանության և գրոհային ջոկատների միացյալ ուժերի դեմ: Ապստամբներից շատերը վերջին գնդակով վերջ դրեցին իրենց կյանքին: Չժխտելով, որ բանկի գրավումը կատարյալ մարտահրավեր էր սուլթանի կառավարությանը, որ ամբողջ գործողությունը ներծծված էր հեղափոխական նվիրվածության ոգով և իրականացվեց անասելի քաջությամբ, Վ. Դադրյանը միաժամանակ նշում է. այնուամենայնիվ, այն իսկական աղետ դարձավ քաղաքի մնացած անզեն ու անմեղ բնակչության համար: Երկու օր շարունակ քաղաքի փողոցներում հոսում էր անպաշտպան հայերի արյունը, որոնց մահվան աստիճան հարվածում էին մահակներով: Բրիտանական, ֆրանսիական և ավստրիական դիվանագետների հավաստմամբ՝ սուլթանն անձամբ էր զինում մարդասպաններին և հրահանգում ոչնչացնել այն ամենը, ինչ հայկական էր:

Աշխատության մեջ առանձին բաժին է նվիրված երիտթուրքերի իշխանության գալու ժամանակահատվածում տեղի ունեցած զանգվածային սպանություններին և նրանց թաքուն մտադրությունների բացահայտմանը: Այն, որ երիտթուրքերի սահմանադրական հեղափոխությունը լոկ պատրանք էր, ըստ հեղինակի՝ ակնհայտ դարձավ 1909 թ. ապրիլի 1-14-ը Ադանայում տեղի ունեցած կոտորածների ժամանակ, որին զոհ գնաց շուրջ 25 000 հայ:

Վ. Դադրյանի աշխատության վեցերորդ բաժինն ամբողջությամբ նվիրված է Առաջին համաշխարհային պատերազմի քողի ներքո Հայոց ցեղասպանության իրականացմանը: Նշվում է՝ հայերին մեղադրելով նրանում, որ, լինելով ազգային փոքրամասնություն, ձեռնարկում էին դավաճանական, անջատողական և նման բնույթի այլ գործողություններ, օսմանյան իշխանությունները կարգադրեցին ազգային անվտանգության նկատառումներով կայսրության արևելյան և հարավարևելյան նահանգներում իրականացնել հայ բնակչության զանգվածային տեղահանություն: Այդ միջոցառումը արդյունք էր զինվորական իշխանությունների և Իթթիհատ կուսակցության կենտրոնական կոմիտեի համաձայնեցված հարձակման, որը նպատակ էր հետապնդում, օգտվելով պատերազմական իրավիճակից, մաքրել Անատոլիան հայ բնակչությունից:

Հետագայում ցեղասպանության պլանն ընդարձակվեց և տարածվեց կայսրության ամբողջ հայ բնակչության վրա, ներառյալ այնպիսի հեռավոր քաղաքներ, ինչպիսիք էին Բուրսան, Էսքիշեհիրը, Կոնիան, ինչ-որ չափով նաև օսմանյան մայրաքաղաք Ստամբուլը: Հեղինակը գրում է, որ այդ կարգադրության քողարկումը, իբր ռազմական անհրաժեշտությամբ թելադրված տեղահանման արտակարգ միջոցառում, իրականում ծառայեց հայ բնակչության ոչնչացման պլանի համար: Տեղահանվածների ճնշող մեծամասնությունը մահացավ ուղղակի և միջնորդված ամենատարբեր գազանությունների հետևանքով: Վ. Դադրյանը հանգամանորեն անդրադառնում է հայերի զորակոչի ու տարագրման հարցերին: Նա գրում է, որ Թուրքիան 1914 թ. օգոստոսի 3-ին հայտարարեց համընդհանուր զորակոչ, որը վերաբերում էր նաև հայ տղամարդկանց. նախ զորակոչվեցին 20-45, հետո՝ 15-20, այնուհետև՝ 45-60 տարեկանները, որոնց օգտագործում էին ռազմական բեռներ տեղափոխելու համար:

Նշվում է, որ դրանից մոտ մեկ ամիս հետո՝ 1914-ի սեպտեմբերի 6-ին, ներքին գործերի նախարարությունը գաղտնագրված շրջաբերականի միջոցով նահանգների իշխանություններին հրաման ուղարկեց հայ քաղաքական և հասարակական առաջնորդներին հսկողության տակ պահելու մասին[1]: Վ. Դադրյանի բնորոշմամբ՝ հայ բնակչությանը լիակատար անօգնականության հասցնելու վերջին և վճռական փուլը տեղահանությունն էր: 1915 թ. մայիսի 26-ին ներքին գործերի նախարարը մեծ վեզիրին դիմեց զեկուցագրով. խնդրում էր անցկացնել տեղահանության իրավունք տալու մասին հատուկ օրենք: Մայիսի 29-ին մեծ վեզիրը դա քննարկման ներկայացրեց, իսկ մայիսի 30-ին կառավարությունը որոշում կայացրեց այդ մասին: Նոր արտակարգ օրենքը կոչվեց «Ժամանակավոր օրենք տեղահանության մասին»: Հատկապես ուղղված չլինելով հայերին՝ օրենքն իրավունք էր վերապահում բանակների, բանակային կորպուսների, դիվիզիաների հրամանատարներին, տեղական կայազորների պարետներին հրաման տալու լրտեսության ու դավաճանության մեջ կասկածվող բնակչության խմբերին տեղահանելու մասին, ինչպես նաև այն դեպքում,

---

[1] **Дадрян В. Н.** *История Армянского геноцида / этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Е., 2007, с. 183.*

երբ դա էին պահանջում ռազմական ժամանակի պայմանները: Ինչպես հեղինակն է պարզաբանում՝ իշխանություններին, որոնց իրավունք էր տրվում հրաման արձակելու տեղահանության մասին, բավական էր միայն, որ վտանգ զգային և կարող էին դրա հիման վրա հրաման տալ: Նշվում է, որ հետպատերազմյան օսմանյան խորհրդարանը այդ օրենքը հակասահմանադրական ճանաչեց: Օրենքը չեղյալ համարվեց 1918 թ. նոյեմբերի 4-ին, երբ դրան արդեն զոհ էր դարձել հսկայական թվով բնակչություն[2]:

Հեղինակը ներկայացնում է նաև 1915 թ. հուլիսի 10-ի լրացուցիչ օրենքը, որը հրահանգներ էր պարունակում, թե ինչպես հաշվառել տեղահանվածների սեփականությունը, երաշխավորել նրա պահպանությունը կամ աճուրդով վաճառքը և պատերազմից հետո գումարը տերերին ինչպես վերադարձնել: Հեղինակի պարզաբանմամբ այդ ամենն իրականում նշանակում էր տեղահանվածների գույքի բռնագրավում:

Քննարկելով ցեղասպանության ժամանակ սպանությունների հարցը՝ հեղինակը գրում է, որ հակառակ օսմանյան իշխանությունների հավաստիացումներին, որոնք հրապարակել էին վերոհիշյալ արտակարգ օրենքները, հայերը չվերադարձան տարագրությունից, քանի որ տարագրությունն ընդամենը քող էր դրան հետևող բնաջնջման համար: Ցեղասպանության զոհերի թվաքանակի վերաբերյալ Վ. Դադրյանը գրում է, որ միայն թուրքական կողմի ներկայացրած պաշտոնական տվյալների համաձայն՝ սպանվածների թիվը 800 000 էր, չհաշված տասնյակ հազարավոր բանակ զորակոչվածներին, որոնց ոչնչացրին հենց իրենք՝ զինվորականները: Սույն հարցի կապակցությամբ ծանոթագրությունում հեղինակը նշում է, որ այդ թիվը հրապարակել է հետպատերազմյան ժամանակաշրջանի թուրքական ներքին գործերի նախարարությունը՝ իրենց իսկ վիճակագրական տվյալների հիման վրա: Պարզաբանվում է նաև, որ այդ թիվը չի ընդգրկում զոհերի մնացած կատեգորիաները, օրինակ՝ նրանց, ում մահապատժի են ենթարկել թուրքական բանակում ծառայելիս, երիտասարդ կանանց հսկայական թվաքանակ, որոնց հարկադրել են արտամուսնական կենակցության, մուսուլմանական ամուսնություններ կամ որդեգրումներ, կրոնական հարկադրանքի զոհեր, մարդկանց անհաշիվ քանակ, որոնք զոհ են գնացել տարագրման անասելի դժվարություններին[3]:

Վ. Դադրյանը հատկապես կանգ է առնում Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթը մահսուսե) գործունեության վրա, նշում, որ այն ստեղծվեց գաղտնի՝ Իթթիհատի պարագլուխների կողմից: Նշվում է, որ իր տրամադրության տակ ունենալով հատուկ կոդեր, ֆոնդեր, կադրեր, զենք և զինամթերք, այն գործում էր իբրև կիսաինքնավար պետություն պետության մեջ: Այդ կազմակերպության անդամների խնդիրն այն էր, որ տեղաբաշխվելով թուրքական հեռավոր նահանգներում՝ հանկարծակի հարձակվեն տեղահանված հայերի շարասյուների վրա ու ոչնչացնեն նրանց: Այդ կազմակերպության գրեթե բոլոր կադրերը դատապարտված հանցագործներ էին, որոնք ազատ էին արձակվել կայսրության բանտերից ներքին գործերի և արդարադատության նախարարությունների հատուկ կարգադրությունների համաձայն:

Հեղինակն առանձին գլուխ է նվիրել Հայոց ցեղասպանությանը Գերմանիայի մասնակցության հարցին: Նշվում է, որ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ուժերի վերադասավորման պայմաններում Թուրքիան և Գերմանիան

---

[2] Նույն տեղում, էջ 284-285:

[3] Նույն տեղում, էջ 300:

միասնական նպատակ դարձրին խոչընդոտել բարենորոգումների վերաբերյալ ռուսական պլաններին: Այդ խնդրի իրականացումը դրվեց Թուրքիայում Գերմանիայի դեսպան Հանս Ֆրեյգեթ ֆոն Վանգենհայմի վրա:

Աշխատության յոթերորդ բաժինը նվիրված է Թուրքիայի ռազմական պարտությունից հետո արդարադատության որոնումներին: Ինչպես նշում է Վ. Դադրյանը, 1918 թ. նոյեմբերի 23-ին տեղծվեց Կառավարական հետաքննող հանձնաժողով՝ Հասան Մազհարի ղեկավարությամբ, որին տրվեցին լայն լիազորություններ: Սուլթանի հրամանով 1918 թ. դեկտեմբերի 16-ին ստեղծվեց Ռազմական արտակարգ դատարան: Թուրքական օրաթերթերից մեկն իր առաջնորդողում ռազմական դատարանում ընթացող դատական պրոցեսն ընդդեմ բարձրաստիճան պաշտոնատար անձանց և Իթթիհատ կուսակցության պարագլուխների՝ բնութագրում էր իբրև «ամենանշանակալի դատավարությունը Օսմանյան կայսրության 600-ամյա պատմության ընթացքում»[4]: Մանրամասնորեն վերլուծելով «Թաք- վիմ-ի վեքայի» թերթում ժամանակին հրապարակված մեղադրական ակտը՝ Վ. Դադրյանը նշում է. մեղադրանքը երկու մասից էր. առաջինը՝ մեղադրյալներին էր մեղսագրվում այն հանցանքը, որ նախ և առաջ նրանք գիտակցաբար էին սադրել Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը՝ դիմելով մի շարք ստոր միջոցների, և երկրորդ՝ օգտվել էին այդ բարենպաստ պայմաններից՝ իրենց գաղտնի նպատակներն իրականացնելու համար: Ինչպես նշում է Վ. Դադրյանը, Իթթիհատի բարձրագույն ղեկավարությունը մեղադրվում էր նաև պաշտոնական հանցագործություններ կատարելու մեջ, քանի որ նրանք բոլորը կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ էին[5]: Եռապետներից երկուսը՝ Էնվերը, ռազմական նախարարն էր և օսմանյան զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը, և Ջեմալը, որը ծովային նախարարն էր և 4-րդ բանակի հրամանատարը, ռազմական ղեկավարներ էին: Եռապետության երրորդ անդամը՝ Թալեաթը, ներքին գործերի նախարարն էր և հիմնական կապող օղակը Հատուկ կազմակերպության և կուսակցության կենտրոնական կոմիտեի ու ռազմական գերատեսչության միջև: Որոշակիորեն առանձնացված էին Իթթիհատի Կենտկոմի անդամներ Նազիմը և Շաքիրը, որոնք մեղադրական ակտում ութ անգամ հիշատակվում էին իբրև Հատուկ կազմակերպության գլխավոր կազմակերպիչներ, որը բազմիցս հիշատակվում էր իբրև սպանությունների, հրկիզումների, ավերածությունների, բռնաբարությունների և ամենատարբեր տանջանքների հիմնական գործիք: Իբրև հիշյալ հանցագործությունները ղեկավարող հիմնական խումբ՝ առանձնացվում էին պատասխանատու քարտուղարները, որոնք նույն դերն ունեին, ինչը հետագայում խաղում էին նացիստական երրորդ ռայխի հաուլայտերները:

Երկարատև դատական գործընթացից հետո՝ 1919 թ. հուլիսի 5-ին, դատարանը կայացրեց հիմնական դատավճիռը: Դատարանը նախարարներին մեղավոր ճանաչեց ինչպես նրանում, որ նրանց համաձայնեցված գործողությունների հետևանքով Թուրքիան ներքաշվեց Առաջին համաշխարհային պատերազմի մեջ, այնպես էլ հայերի ցեղասպանության իրականացման մեջ: Գլխավոր հանցագործների նկատմամբ դատավճիռ կայացվեց քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի 55-րդ և 170-րդ հոդվածներով: Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, դոկտոր Նազիմը և կառա- վարության նախարարները հեռակա դատապարտվեցին մահապատժի: Վ. Դադրյանը եզրակացնում է,

[4] Նույն տեղում, էջ 416:
[5] Նույն տեղում, էջ 419:

որ դատական այդ գործընթացները բազմաթիվ դատաքննությունների միայն մի փոքր մասն էին, ընդամենը նախապատրաստություն այն պահի, երբ սուլթանի կառավարությանը հաջորդելու եկավ քեմալիզմը: Ռազմադաշտային բոլոր դատարանները 1921 թ. հունվարի 13-ին վերացվեցին, իսկ նրանց իրավասությունները հանձնվեցին սովորական ռազմական դատարաններին: Իթթիհատի գրեթե բոլոր կարևորագույն դեմքերին հաջողվեց Թուրքիայից հեռանալ ու թաքնվել մինչև նրանց դատարան կանչելը: Ավելի քիչ նշանավոր շատ իթթիհատականներ նույնպես հեռակա կարգով դատապարտվեցին մահվան կամ բանտարգելության, սակայն նրանք կամ թաքնվեցին, կամ ազատվեցին:

Ամփոփելով շարադրանքը դատավարությունների մասին՝ հեղինակը գրում է, որ ստորագրելով Լոզանի հաշտության պայմանագիրը, դաշնակիցները վերջնականապես ճանաչեցին Թուրքիայի նոր ազգային քաղաքականությունը: Պատժիչ արդարադատության սկզբունքը, որը հանդիսավորապես հայտարարվել էր ինչպես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, այնպես էլ ռազմական գործողությունների ավարտից հետո, պատերազմից հետո մոռացության տրվեց:

Աշխատության ութերորդ բաժնում քննարկված են արևելահայության նկատմամբ իրականացված ցեղասպանության հիմնախնդիրները: Հիշատակելով 1920 թ. օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագիրը, ըստ որի՝ պետք է ստեղծվեր Մեծ Հայաստան, ներառելով Էրզրումը, Երզնկան և նավահանգստային քաղաք Տրապիզոնը, Վ. Դաղբյանը համոզմունք է հայտնում, որ հենց այդպիսի ընդարձակ նոր Հայաստանի ստեղծման պլանն էլ դարձավ այն հիմնական շարժառիթը, որը կյանքի կոչեց, ձևավորեց և վերջնականապես ուղղորդեց քեմալականների ապստամբությունը: Նրա կարծիքով՝ քեմալական շարժման պարագլուխներն առաջնորդվում էին այն նույն ազգայնամոլական շարժառիթներով, որոնք իթթիհատականներին հասցրին ցեղասպանության իրականացման. անհրաժեշտ էր ինչ գնով էլ լինի կանխել Թուրքիայի սիրտը համարվող արևելյան նահանգների կորուստը[6]:

Կարծիք է հայտնվում, որ քեմալական ապստամբությունը ոչ միայն նախաձեռնեցին, կազմակերպեցին և ուղղորդեցին թուրքական զինվորական ակադեմիայի շրջանավարտ-գեներալները, այլև այն հենվեց թուրքական բանակի բանակային կորպուսների մնացորդների վրա, որոնց վիճակված էր թարմացնել իրենց կազմը և վերակազմակերպվել նոր բանակի:

Հեղինակի շարադրանքի համաձայն՝ ամեն ինչ սկսվեց Էրզրումում՝ Արևելյան Թուրքիայում, որտեղ 1919 թ. մայիսին գեներալ Կարաբեքիրը, իբրև 15-րդ բանակային կորպուսի (նախկին 9-րդ բանակի) հրամանատար, ստեղծեց իր նոր սպայակույտը: Դրանից անմիջապես հետո սկսվեց նախապատրաստությունը նորաստեղծ Հայաստանի Հանրապետության վրա հարձակվելու համար, քանի որ սպասվում էր, որ նա պետք է լինի շահողը Սևրի պայմանագրի պայմաններից: Իսկ այդ պայմանագիրն ինչ-որ չափով պարտադրված էր սուլթանի կառավարությանը, որը ներկայացնում էր պարտված Թուրքիան: Վեց շաբաթ անց սկսվեց հարձակումը Հայաստանի վրա:

Ինչպես գրում է Վ. Դաղբյանը, նորաստեղծ Հայաստանի Հանրապետության վատ համալրված, ոչ արհեստավարժ ու չնախապատրաստված նորաթուխ բանակը չէր կարող դիմանալ ներխուժման ճնշմանը: Նոյեմբերի 6-ին, ի պատասխան Հայաստանի բավական երերուն կառավարության՝ հաշտության մասին խնդրանքի, Կարաբեքիրը հայերին

---

[6] *Նույն տեղում:*

փոխանցեց իր պայմանները: Սակայն Անկարայից ստացված ցուցումների համաձայն՝ նա ստիպված էր հրաժարվել իր իսկ պայմաններից, թեև հայերը մեկ օր առաջ ընդունել էին դրանք: Այդ ցուցումները ներառում էին նոր, միտումնավոր կոշտ պայմաններ, որպեսզի բացառվեր դրանց ընդունումը: Ինչպես ենթադրվում էր, նոյեմբերի 10-ին հայերը մերժեցին այդ նոր պայմանները. գեներալ Կարաբեքիրը վերսկսեց արշավանքը՝ նպատակակետ ունենալով Հայաստանի մայրաքաղաք Երևանը, ինչպես նաև հարկադրել հայերին՝ երկրորդ անգամ հաշտություն խնդրելու: Այս անգամ նրանք ընկան նոր և կրկին ցեղասպանության միտված հանցավոր դիտավորության թակարդը, որի մասին, հեղինակի հավաստմամբ, վկայում է վերջերս նրա հայտնաբերած մի չափազանց կարևոր պաշտոնական փաստաթուղթ: Վ. Դադրյանի գնահատմամբ՝ այդ փաստաթուղթը, ըստ էության, ցեղասպանության նոր սխեմա էր՝ ընդդեմ Անդրկովկասի ռուսաստանյան հայերի:

Ծանոթագրության մեջ Վ. Դադրյանը պարզաբանում է, որ այդ փաստաթուղթը 1920 թ. նոյեմբերի 8-ով թվագրված ծածկագիր հեռագիր էր: Այն ուղարկված էր արտգործնախարար Ահմեդ Մուխթարի կողմից՝ գեներալ Կարաբեքիրին: Կարաբեքիրը արևելյան ռազմաճակատի բանակի գլխավոր հրամանատարն էր, որը փաստաթղթավորել է քեմալական ապստամբական շարժման ամբողջ ռազմական կամպանիան: Դրա առաջին փուլը ներառում էր 1920 թ. սեպտեմբերին ներխուժումը Հայաստան, որը 1918 թ. մայիսից ձեռք էր բերել ազատ և անկախ հանրապետության կարգավիճակ: Հայկական անփորձ բանակը ի վիճակի չէր հակառակորդին լուրջ դիմադրություն ցույց տալու: Հրահանգները, որոնք նոր ցեղասպանության պլան էին ենթադրում, ներառված էին ծածկագիր հեռագրում, որը Կարաբեքիրին էր ուղարկվել հաշտության բանակցությունների ամենասկզբում: Հայաստանը ոչնչացնելու Անկարայի գաղտնի պլանի մա- սին վկայող այդ ծածկագիր հեռագիրը ընդգրկված է Կարաբեքիրի գրքի 1960 թ. առաջին հրատարակության 901-րդ էջում: Ինչպես հեղինակն է նշում՝ այնքան էլ պարզ չէ, թե ինչու է այդ փաստաթուղթը զետեղված Կարաբեքիրի գրքում: Սակայն ուշագրավ է այն փաստը, որ այդ ծածկագիրը այլևս որևէ այլ տեղ չհայտնվեց, և առ այսօր ոչ ոք չի փորձել գնահատել դրա արտակարգ կարևորությունը[7]: Կարծում ենք, որ արևելա- հայությունը ցեղասպանության ենթարկելու քեմալականների գաղտնի պլանները հաստատող ծայրաստիճան կարևոր սույն փաստաթուղթը, որը հայտնաբերվել ու շրջանառության մեջ է դրվել Վ. Դադրյանի տքնաջան հետազոտությունների շնորհիվ, սկզբունքային նշանակություն ունի նաև Հայաստանի խորհրդայնացումը օբյեկտիվ դիրքերից գնահատելու տեսանկյունից: Վ. Դադրյանի համոզմամբ՝ այդ փաստաթուղթը սեղմ պատկերացում է տալիս ցեղասպանության քաղաքականության հաջորդականության առավել բնութագրական առանձնահատկությունների մասին[8]:

Չափազանց կարևոր, ուսանելի ու արդիական են Վ. Դադրյանի մտքերը Հայաստանի ու հայ ժողովրդի հետագա ճակատագրի մասին: Վկայակոչելով մի շարք հեղինակների աշխատություններ՝ նա եզրահանգում է, որ եվրոպական պետություններից և ոչ մեկը մտադիր չէր լրջորեն զբաղվել Հայաստանով: Եվ այժմ՝ թուրքական արշավանքի ընթացքում, հայտնվելով որոշում ընդունելու անհրաժեշտության առջև, նրանք սառնասրտորեն ու անխղճորեն իրենցից վանեցին հայերին ու նրանց նորածին պետությանը: Ինչպես շատ

---

[7] *Նույն տեղում, էջ 475, ծանոթագրություններ, գլ. 20, կ. 4:*

[8] *Նույն տեղում, էջ 459:*

դիպուկ նկատում է Վ. Դաղրյանը, Անկարայում կայացված որոշումը՝ ոչնչացնել Հայաստանը, երկար քննարկումների արդյունք էր: Դրանք հանգեցրին այն եզրակացության, որ Անգլիայի կամ մեկ այլ դաշնակից պետության միջամտությունը, ի պաշտպանություն Հայաստանի, քիչ հավանական է[9]: Այնուհետև աշխարհահռչակ պատմաբանը հայտնում է հետևյալ միտքը. «Սակայն վերջին պահին մոտերքում գտնվող 11-րդ Կարմիր բանակի մուտքը Հայաստան խորտակեց հայ ժողովրդի մնացած մասին վերջին հարվածը հասցնելու թուրքական կառավարության պլանը: Մեղմագույն ժամկետներում թուրքական ռազմական հաղթանակից անմիջապես հետո խորհրդայնացնելով Հայաստանը, այդ բանակը կանխեց հայ ժողովրդի անհետացումը, որը գրեթե ավարտված փաստ էր»[10]: Հետագա շարադրանքում Վ. Դաղրյանը հանգամանորեն ցույց է տալիս, որ արևելահայության նկատմամբ կազմակերպված ցեղասպանությանը ակտիվորեն մասնակցել են բազմաթիվ իթթիհատական գործիչներ, Հատուկ կազմակերպության նախկին անդամներ, զինվորական հրամանատարներ, իսկ Թալեաթն ու Էնվերը իրենց նամակներով ոգևորել են Կարաբեքիրին, տվել անհրաժեշտ ցուցումներ:

Վ. Դաղրյանի աշխատության վերջին բաժինը Հայոց ցեղասպանության ընդհանուր ամփոփումն է՝ Հրեական հոլոքոստի հետ համեմատական հեռապատկերում, որտեղ Հայոց ցեղասպանությունը դիտարկված է իբրև հոլոքոստի նախադեպ: Աշխատության վերջաբանում հեղինակն անդրադառնում է հայերի վրիժառուական գործողություններին և, ներկայացնելով թուրքական պաշտոնական տվյալները, նշում, որ Բայբուրդում, Մամախաթունում, Երզնկայում և Էրզրումում ընդհանուր առմամբ դրանց զոհ են գնացել 5000-5500 թուրքեր[11]:

Պատկառազդու է աշխատության բազմալեզու մատենագիտությունը: Վ. Դաղրյանի աշխատությունը համապարփակ և հիմնարար ուսումնասիրություն է Հայոց ցեղասպանության վերաբերյալ, որն ունի գիտատեսական և ճանաչողական կարևորագույն նշանակություն:

Կարծում ենք՝ հրամայական անհրաժեշտություն է նախաձեռնել այդ բարձրարժեք գրքի նաև հայերեն թարգմանությունն ու հրատարակությունը և այն մատչելի դարձնել ստվարաթիվ հայ ընթերցողներին:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Մ. Ս.
Պատմական գիտությունների դոկտոր

ԳԵՎՈՐԳՅԱՆ Է. Գ.
Պատմական գիտությունների թեկնածու

ՄԵԼՔՈՆՅԱՆ Է. Վ.

---

[9] Նույն տեղում, էջ 461:

[10] Նույն տեղում:

[11] Նույն տեղում, էջ 544, տե՛ս ծանոթագրություններ վերջաբանի, էջ 554, կետ 1: